ճաջող ավարտման համար. Երբ վիթխարի պայքար է մղվում հանուն պայծառ ապագայի, մեր գիտնականները, ինչպես միշտ, ընթանում են այդ պայքարի, հայ ժողովրդի համար աշխատանքի առաջին շարքերում:

Թույլ տվեք, բանկագին ընկերներ, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, հանրապետության Գերագույն սովետի նախագահության և Մինիստրների սովետի անունից, ձեր անունից, Սովետական Հայաստանի ժողովրդի անունից գիտությունների մեր ակադեմիային, Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներին և թղթակից-անդամներին, ակադեմիայի սիստեմի բոլոր աշխատողներին, ինչպես նաև բոլոր հայ գիտնականներին ջերմորեն և ի սրտե շնորհավորել հարազատ ակադեմիան կառավարական բարձր պարգևով պարգևատրելու առթիվ և նրանց նորանոր հաջողություններ մաղթել իրենց ոչ դյուրին, բայց պատվավոր ու ազնիվ գործունեության մեջ, ցանկանալ առողջություն և երջանկություն անձնական կյանքում:

(ԸՆԿ. Կ. Ս. ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ՃԱՌԸ ԼՍՎԵՑ ՄԵՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԲԱԶՄԻՑՍ ԸՆԴՀԱՏՎՈՒՄ ԷՐ ԾԱՓԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ):

Այնուհետև ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը հրապարակեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան Ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը: Հանդիսավոր ժողովի մասնակիցների բուռն, երկարատև ծափահարությունների ներքո նա շքանշանն ամրացրեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի դրոշին:

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի անունից հայ գիտնականներին ի սրտե շնորհավորեցին ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահության անդամ, սոցիալիստական աշխատանքի հերոս, ակադեմիկոս Ն. Ն. Բոգոլյուբովը, Վրացական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտ, Վրաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ե. Կ. Խարաձեն, Ադրբեջանական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահության անդամ Մ. Ս. Կաշկայը:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի առաջին իսկական անդամների անունից նիստում ելույթ ունեցավ հանրապետության գիտությունների ակադեմիայի կենսաֆիզիկայի ինստիտուտի դիրեկտոր Հ. Խ. Բունիաթյանը:

Հայ գիտնականների երիտասարդ սերնդի անունից ելույթ ունեցավ հանրապետության գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ն. Հ. Առաքելյանը:

Խոսքը տրվում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, սոցիալիստական աշխատանքի հերոս, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանին:

— Բառերով դժվար է հաղորդել այն հուզմունքն ու երախտագիտությունը, որ այսօր, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիային Ժողովուրդների բարեկամության շքանշան հանձնելու օրը զգում է նրա կոլեկտիվը,— ասում է նա.— Մեր անսահման շնորհակալությունն ենք հայտնում ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեին, ՍՍՀՄ կառավարությանը՝ Հայաստանում և ամեն մի միութենական հանրապետությունում գիտության այս նոր խրախուսման համար:

Մենք շնորհակալություն ենք հայտնում նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեին և հանրապետության կառավարությանը ակադեմիայի կարիքների նկատմամբ ցուցաբերած մշտական հոգատարության և ուշադրության համար:

Ամբիոնին է մոտենում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտ, հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Թ. Հովհաննիսյանը:

Նա ընթերցում է Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեին, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը և ՍՍՀՄ Մինիստրների սովետին հասցեագրված ողջույնի նամակը: Ժողովի մասնակիցների միաձայն ընդունած այդ փաստաթղթում Հայաստանի գիտնականների բազմահազարանոց ջոկատի անունից հարազատ կոմունիստական կուսակցությանը և սովետական կառավարությանը խորին երախտագիտություն է հայտնվում բարձր պարգևի, գիտության զարգացման նկատմամբ ցուցաբերվող հսկայական ուշադրության և հոգատարության համար:

Վերջում Հայաստանի արվեստի վարպետների ուժերով տրվեց նոխ համերգ:

(ԱՐՄԵՆՊՐԵՍ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Այսօր հանրապետության առջև դրված ժողովրդա-տնտեսական խոշոր պրոբլեմների լուծումը մեծապես պայմանավորված է գիտա-տեխնիկական առաջընթացի տեմպերով, գիտական հիմնարկների և առաջին հերթին հանրապետության գիտությունների ակադեմիայի աշխատանքի արդյունավետության բարձրացումով: Այդ բանը մեկ անգամ ևս ցույց տվեց ակադեմիայի օրերս կայացած ընդհանուր ժողովը, որը հենարկեց «Հայկական ՍՍՀ ժողովրդական

տնտեսության զարգացման մոտակա հեռանկարի հետ կապված գիտական աշխատանքների մասին» հարցը:

Ժողովին մասնակցեցին նշանավոր գիտնականներ, խոշոր հետազոտական հիմնարկների և ձեռնարկությունների ղեկավարներ, պլանային և տնտեսական մարմինների ներկայացուցիչներ:

Ժողովին մասնակցեցին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը, հանրապետության Մինիստրների սովետի նախագահ Դ. Ա. Արզումանյանը, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Վ. Բ. Ղալումյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի տեղակալներ Ռ. Ք. Սվետլովան, Ս. Լ. Բումանյանը:

Ժողովում զեկուցումով հանդես եկավ ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը:

Վերջին ժամանակներս հանրապետության գիտությունների ակադեմիայի հիմնարկներում մշակվել են մի շարք թեմաներ, որոնք կարևոր նշանակություն ունեն ժողովրդական տնտեսության համար: Իրենց ելույթներում դրանց մասին պատմեցին Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ա. Բ. Նալբանդյանը, Դ. Ս. Դավրյանը, ակադեմիայի թղթակից-անդամներ Ս. Հ. Վարդանյանը, Ա. Ա. Գալոյանը, Է. Դ. Ավրիկյանը և ուրիշներ:

Ակադեմիայի և նրա ինստիտուտների աշխատանքի կազմակերպման առանձին բերությունների մասին իրենց ելույթներում խոսեցին Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ա. Ղ. Իոսիֆյանը, Դ. Ա. Բաբաջանյանը և ժողովի այլ մասնակիցներ:

Սակայն ճիշտ չէր լինի «գիտություն-արտադրություն» օղակի բոլոր բերությունների ամբողջ պատասխանատվությունը բարդել գիտնականների վրա: Այս մասին խոսեցին Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Է. Հ. Միրզաբեկյանը, Ա. Ի. Ալիխանյանը, ակադեմիայի թղթակից-անդամներ Ֆ. Տ. Սարգսյանը, Վ. Վ. Ալեքսանդրովը, Մ. Լ. Տեր-Միքայելյանը:

Ժողովում ելույթ ունեցած ակադեմիայի անդամները խոսեցին այն մասին, որ անհրաժեշտ է վերանայել գիտական և արտադրական կազմակերպությունների համար կադրերի պատրաստման սիստեմները: Հանրապետության ժողովրդական տնտեսության ժամանակակից նյութերի և գիտական ուղղությունների զարգացման շահերը պահանջում են վճռականորեն փոխել մասնագետների պատրաստման ավանդական համամասնությունները, առավելություն տալով էլեկտրոնային հաշվողական տեխնիկայի, արդյունաբերական կենսաբանության, երկրաբանության մասնագետների պատրաստմանը:

Օրակարգի քննարկման ընթացքում առաջարկներ արվեցին ժողովրդական տնտեսության այս կամ այն հյուղի զարգացման, գիտատեխնիկական առաջադիմության նվաճումների արմատավորման վերաբերյալ: Ժողովում ելույթներ ունեցան նաև Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ա. Ա. Առաքելյանը, Վ. Հ. Ղազարյանը, Դ. Բ. Ղարիբջանյանը, ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Տ. Ասլանյանը և ուրիշներ:

Ընդհանուր ժողովի մասնակիցները Հայաստանի կոմկուսի Կենտրոնական կոմիտեին հավաստիացրին, որ ակադեմիայի գիտական կոլեկտիվները ամենայն ակտիվությամբ կմասնակցեն Կենտկոմի հուլիսյան պլենումի որոշումների կենսագործմանը, որոնք հանրապետության աշխատավորներին մոբիլիզացնում են կատարելու ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի որոշումը:

(ԱՐՄԵՆՊՐԵՍ)

ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

Երկրորդ տարին է, որ ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտը Մոսկվայում կազմակերպում է Արևելքի միջնադարյան պատմությանը նվիրված «Բարտոլդյան[1] ընթերցումներ»։

Այս տարվա ընթերցումները նվիրված էին ֆեոդալական սեփական հողատիրությանն (միլք, մուլք)[2] ու պարգևական տիրույթներին (իկթա), արձանագրություններ։ Նա հեղինակ է Իսլամի հանրագիտարանում Հայաստանի մի շարք քաղաքների (Անի, Կարս) մասին հոդվածների։

---

1 *Վ. Վ. Բարտոլդը (1869—1930) ռուսական արևելագիտության խոշորագույն դեմքերից է։ Արևելյան միջնադարի մասին նա գրել է բազմաթիվ աշխատություններ, որոնցից առանձնապես հայտնի է «Թուրքեստանը մոնղոլական արշավանքների ժամանակաշրջանում» երկհատոր մենագրությունը։ Զբաղվել է նաև Հայաստանի պատմության որոշ հարցերով, հրատարակել է Անիի Մանուչեի աշտարակի պարսկերեն*

2 *Միլքը (համապատասխանում է հայկական «հայրենիքին») միջնադարյան Արևելքում հողի մասնավոր սեփականության մի էր։ Օմայան խալիֆայության ժամանակ, երբ պետական հողատիրությունը մեծ տարածում ուներ, միլք հողերը համեմատաբար քիչ էին, բայց աստիճանաբար ընդարձակվեցին։ Ժամանակի ընթաց-*